ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. մայիսի 22-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ
Վահան Բերակչյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **15.05.2023թ.-ի «Արարատ»-«Վան» (ՊԼ-159) խաղի ժամանակահատվածում «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Հրայր Մկոյանի (1483) կողմից մրցավարի կայացրած որոշման նկատմամբ անհամաձայնություն հայտնելը և վերջինիս հասցեին վիրավորական արտահայտություններ, հայհոյանքներ հնչեցնելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Հրայր Մկոյանի (1483) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ

հոդվածի 37-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 3 խաղով և «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամի չափով:

Որակազրկումը տարածվում է 15.05.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում:

2. **16.05.2023թ.-ի «Ալաշկերտ»-«ԲԿՄԱ» (ՊԼ-156) խաղին տոմսային համակարգի թերի կիրառումը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 74-րդ կետը՝ «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

3. **17.05.2023թ.-ի «Շիրակ»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ-160) խաղի ժամանակահատվածում խաղադաշտի գովազդային կողավահանակների ոչ պատշաճ տեղադրումը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 46-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

4. **19.05.2023թ.-ի «ԲԿՄԱ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ-185) խաղի ժամանակահատվածում ոստիկանության ներկայացուցիչների բացակայությունը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ԲԿՄԱ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «ԲԿՄԱ» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

5. **19.05.2023թ.-ի «Գյումրի ՄՊՀՄԴ-10»-«Դովեղ-10» (13Մ2-072) անհարգելի պատճառով «Դովեղ-10» թիմի խաղին չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Դովեղ-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Դովեղ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

6. **20.05.2023թ.-ի «Ալաշկերտ-05»-«Կողբ Յունայթեդ-05» (18Բ-062) անհարգելի պատճառով «Կողբ Յունայթեդ-05» թիմի խաղին չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Կողբ Յունայթեդ-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Կողբ ՄԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի՝ 40,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

7. **21.05.2023թ.-ի «Կիլիկիա-07»-«Իջևան-07» (16B-059) խաղին 1)«Կիլիկիա-07» թիմի կողմից չհայտավորված ֆուտբոլիստի մասնակցելը, 2) «Կիլիկա-07» թիմի առաջնության ընթացքում երեք տեխնիկական պարտություն (16B-044, 16B-047, 16B-059) ստանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Կիլիկիա-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 37-րդ կետը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Երանոսի N1 միջ/դպ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Կիլիկիա-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 8-րդ կետը՝ թիմին հեռացնել առաջնությունից, տվյալ մրցաշրջանում զրկել ՀՖՖ հովանու ներքո անցկացվող այլ մրցաշարերին մասնակցելու իրավունքից:

8. **17.05.2023թ.-ի «Ակադեմիա-1-09»-«Փյունիկ-1-09» (15A-072) խաղին «Ակադեմիա-1-09» թիմի գլխավոր մարզիչ Նարեկ Ազատյանի (2112) կողմից մրցավարի հասցեին հայհոյանք հնչեցնելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ակադեմիա-1-09» թիմի գլխավոր մարզիչ Նարեկ Ազատյանի (2112) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ վերջինիս զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից մինչև ս/թ հունիսի 10-ը ներառյալ և «Տեխկեն-ն Ակադեմիա»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

9. **18.05.2023թ.-ի «Սարդարապատ-08»-«Փյունիկ-2-09» (15C2-053) խաղի ժամանակահատվածում «Սարդարապատ-08» թիմի ֆուտբոլիստներ Արտյոմ Արշակյանի (41794), Նիկոլայ Իվանյան (41797) ֆուտբոլիստների մրցակցի հետ վեճի բռնվելը, հարվածելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Սարդարապատ-08» թիմի ֆուտբոլիստ Արտյոմ Արշակյանի (41794) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Սարդարապատ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

2) Հաստատված համարել «Սարդարապատ-08» թիմի ֆուտբոլիստ Նիկոլայ Իվանյանի (41797) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Սարդարապատ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5000 ՀՀ դրամի չափով:

<u>Որակազրկումները տարածվում են 18.05.2023թ.-ից սկսած և ներառում են արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում:</u>

10. 27.04.2023թ-ի «Փյունիկ» - «Արարատ-Արմենիա» (ՊԼ-142) խաղին 1) դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից խաղի ժամանակահատվածում ձայնային և ծխային ռումբերի, ֆայերների և բենգալյան կրակների արձակում, ծխային ռումբերի՝ խաղադաշտ և հյուր թիմի երկրպագուների սեկտոր նետման արդյունքում խոտածածկի վնասելը 2) դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից լազերների օգտագործումը, 3) դաշտի տեր երկրպագուների կողմից հյուր թիմի երկրպագուների հասցեին հայհոյանքներ հնչեցնելը, մարզադաշտում կարգ ու կանոնը չպահպանելը, հյուր թիմի երկրպագուների սեկտոր ներխուժելը, 4) հյուր թիմի երկրպագուների կողմից խաղի ժամանակահատվածում ձայնային և ծխային ռումբերի, ֆայերների և բենգալյան կրակների արձակում 5) հյուր թիմի երկրպագուների կողմից սադրիչ գործողություն կատարելը (պաստառի ցուցադրումը)

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 28-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:
3) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և Կանոնակարգի 28-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա՝ համակցելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը և Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
4) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250,000 ՀՀ դրամի չափով:

Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի՝ 25,000 ՀՀ դրամի չափով:

5) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

11. 13.05.2023թ.-ի «Կողբ Յունայթեդ-05»-«Սարդարապատ-05» (18B-059) անհարգելի պատճառով «Սարդարապատ-05» թիմի խաղին չներկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Սարդարապատ-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Սարդարապատ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի՝ 40,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

12. 18.05.2023թ.-ի «Արփա-07»-«Բերդավան-07» (16C1-037) «Բերդավան-07» թիմի՝ առաջնության ընթացքում անհարգելի պատճառով երկրորդ անգամ չներկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Բերդավան-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 7-րդ կետը՝ «Բերդավան-07» թիմին հեռացնել առաջնությունից, տվյալ մրցաշրջանում զրկել ՀՖՖ հովանու ներքո անցկացվող այլ մրցաշարերին մասնակցելու իրավունքից, թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Բերդավան գ-պետ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի՝ 40,000 ՀՀ դրամի չափով:

13. 16.05.2023թ.-ի «Ակադեմիա-1-13»-«Ուրարտու-1-13» (10Գ-033) և «Փյունիկ-1-13»-«Ուրարտու-2-13» (10Գ-034) հանդիպումների ժամանակ ՀՖՖ Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի (2022-2023 մրցաշրջան) Գլուխ 8-ի հոդված 25.08 և 25.10 կետերը խախտելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Ակադեմիա-1-13» և «Ուրարտու-1-13» թիմերի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հաշվի առնելով ՀՖՖ Տեխնիկական

կենտրոն/ակադեմիայի և «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ի կողմից ներկայացված գրությունները, ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի միջնորդությունը և հիմք ընդունելով Կանոնակարգի 36-րդ հոդվածի 2-րդ կետը և Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը՝ թույլատրել վերանշանակել «Ակադեմիա-1-13»-«Ուրարտու-1-13» (10Գ-033) հանդիպումը։

2) Հաստատված համարել «Փյունիկ-1-13» և «Ուրարտու-2-13» թիմերի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հաշվի առնելով «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ի և «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ի կողմից ներկայացված գրությունները, ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի միջնորդությունը և հիմք ընդունելով Կանոնակարգի 36-րդ հոդվածի 2-րդ կետը և Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը՝ թույլատրել վերանշանակել «Փյունիկ-1-13»-«Ուրարտու-2-13» (10Գ-034) հանդիպումը։

14. 15.05.2023թ.-ի «Փյունիկ»-«Նոա» (ՊԼ-158) խաղի ժամանակահատվածում 1) «Փյունիկ» թիմի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանի (307) կողմից անվայել վարքագիծ և ոչ մարզական պահվածք դրսևորելը 2) «Նոա» թիմի գլխավոր մարզչի օգնական Ռոբերտ Արզումանյանի (810) կողմից անվայել վարքագիծ և ոչ մարզական պահվածք դրսևորելը

Կոմիտեն, քննության առնելով «Փյունիկ ՖԱ» ՀԿ կողմից 2023 թվականի մայիսի 18-ին և «Նոա ՖԱ» ՀԿ կողմից 2023 թվականի մայիսի 17-ին ներկայացված դիրքորոշումները, լսելով 2023 թվականի մայիսի 19-ին և մայիսի 22-ին Կոմիտեի նիստերին հրավիրված «Փյունիկ» թիմի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանի և «Նոա» թիմի գլխավոր մարզչի օգնական Ռոբերտ Արզումանյանի բանավոր դիրքորոշումները՝ Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանի (307) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը և Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը՝ վերջինիս զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 2 խաղով և «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250,000 ՀՀ դրամի չափով։
2) Հաստատված համարել «Նոա» թիմի գլխավոր մարզչի օգնական Ռոբերտ Արզումանյանի (810) կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը և Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը՝ վերջինիս զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 2 խաղով և «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250,000 ՀՀ դրամի չափով։

<u>Որակազրկումները տարածվում են 15.05.2023թ.-ից սկսած և ներառում են արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը (այդպիսիք լինելու դեպքում)։</u>